



Ղևոնդ Ավիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Վերջաբան առ Հայկակ

ԱՀԱ վերջին խարոյկն է որ կու մխայ մեր հայրենական հսկմանց վառարանին անկիւնը, ով Հայկակ . եւ այս ճաթոտող ու վառվառուն մախրիքս՝ վաղը առտու պիտի գտուին ցուրտ մոխիրք . եւ այնպէս մնան, մինչեւ որ տարւոյն երեք եղանակներն ալ դառնան լրանան, եւ նորէն գայ չորրորդն: Եւ երբ նորէն դառնայ գայ այս եղանակս, արդեօք մենք ալ նորէն պիտի գտնե՞նք գիրար՝ մեր վառարանին քով:...

Ահա գարնանաբեր լուսնին նորարծարծ ճառագայթներն՝ պատուհանաց ապակիներէն ներս ցայտելով, կու հրաւիրեն գմեգ բանալ փականքը, ելնել դուրս, տեսնել նորէն զբնութիւն: Բնութիւն նորոգեալ, իբրեւ իր ստեղծմանը առաւօտուն, իբրեւ առաջին իրիկունը, յորում նոր վառած լուսնին ճաճանչից տակ՝ կու հանգչէր խաղաղիկ, ինչպէս սպիտակագգեստ մօր մը շղարշից մէջ՝ անդրանիկն անուշաքուն:...

Այլ մինչդեռ հոս այսպէս պայծառ ծագէ եւ ծիծաղի լուսնակս, միթէ երկրիս ուրիշ կողմեր ալ չե՞ն թաղուած թաթղուած մթութեան մէջ: Միթէ երկրիս քրոջ՝ ծիածաւալ ծովուն ծուփ ծուփ ծոցերուն մէջ՝ չկա՞ն ալէկոծ նաւեր՝ որ անդունդ սահելով՝ գոնէ ինկնելու վիին ատակը տեսնելու համար՝ աստղիկ մը լուսիկ մը կու մուրան վերէն, եւ չեն տեսներ:...

Այսպէս է կենաց ընթացքն, երբեմն լոյս եւ երբեմն մութ . եւ միշտ հարկ է երթալ, ինչուան որ հասնինք արարչագիր կէտը: Սակայն ով որ գերկիրս յատակ մը կու

ճանչնայ այն տաճարին՝ որոյ վերնայարկն է երկին, միշտ անխռով կ'երթայ, խաղաղ կ'ապրի:

Քանի որ սրտի սինականշիտակ է, եւ հոգւոյն կարմիր կանթեղն վառ է, յաջող է մարդու:

Մեր խարոյկն կու մարի . լուսնակն ալ կու ծածկի կու մաշի: Սիրալիր սիրտն անսպառ է: Անմահութեան ակնկալու հոգին՝ երջանիկ է:

Հաւատարիմն Աստուծոյ եւ իր անձին՝ հաւատարիմ է եւ հայրենեաց:
Անհաւատարիմն հայրենեաց՝ չէ հաւատարիմ եւ իր հոգւոյն եւ ոչ երկնից:
Ամենէն սուրբ եւ ազնիւ գործ եւ աշխատանք երկրիս վրայ՝ երկնից եւ հայրենեաց
համար եղածներն են: Թէպէտ եւ գանազան են հասակք եւ վիճակք, այլ ամենքն
ալ ըստ չափու եւ ըստ վիճակի իրեանց՝ պարտական են երկնից եւ
հայրենեաց:...

Ահա կու հնչէ հասարակ գիշերուան պահն:...

Մեր միայնախօսութեանց ժամերն անցան, կու սկսին ժամք գործոց եւ
աշխատութեանց: Վաղն, նոր օր, նոր գարուն, ի նոր կեանս կու հրաւիրէ գրեգ,
Հայկակ:

Նորաբողբոջ բնութեան մէջ բացուած՝ նոր կոկոն մարդկութեան, ծաղիկ
Հայութեան, առոյգ հասակաւ ձեւացեալ, արդ կու վայլէ որ ձեւանաս
քաղաքական կենօք . վիճակ մը ընտրելով, եւ գործ մը կատարելով յերկրի,
յօգուտ ընտանեաց եւ հայրենեաց, եւ հաճոյ երկնից:

Հարկ է որ մնաս բարով ըսենք իրարու, անմոռաց պահելով մեր հայրենեաց
Յուշիկքը: Առնում ես իմ հասակիս ցուպը, եւ իջնեմ բլրէս վար . առնուս դու ալ
հասակիդ յարմար աշխատութեան գործիդ, օրինել տաս երկնից, եւ ելնես դէպ ի
վեր, ի բլուրն կենաց: Արդ սուրբ հոգիք նախնեաց մերոց՝ քեզ բարեխօս եւ
պաշտպան հայրենեաց շաղէն՝ անշեղ ըլլայ քու վիճակիդ ճամբան . բաղդդ՝
յերկրէս յերկինք հասնի անխափան:

Սակայն ինչ ալ որ ըլլայ քու վիճակդ կամ գործդ, յիշէ Հայկակ, որ գործն՝ իրմով չէ՛ ազնիւ կմ մեծ, այլ ընողն է որ կ'ազնուացընէ կու սրբացընէ զգործը: Առանց գործողի՝ գործք մեռեալ սոսկ անուն մ'են . մարդս՝ զանունը բան կ'ընէ, բանը գործ, գործը՝ կենդանութիւն եւ զկենդանութիւնն՝ անմահութիւն:

Յաջողութիւնն շատ հեղ երկնից շնորհք մ'է . բայց առանց երկրիս վրայ աշխատելու՝ վերէն յաջողութիւն չիջներ: Մանաւանդ թէ յաջողութիւնն պատրաստ է իբրեւ զարեւ եւ զանձրեւ . բայց եթէ ազարակն սերմանուած չէ՝ ի՞նչ բուսցընեն երկնից շողն ու ցօղն:

Մարդս փոքրիկ արարած մ'է, բայց ոտքերն երկրիս ամեն կողմն ալ կրնան կոխել . երկու ձեռքովը կրնայ ծայրէ ի ծայր աշխարհակալել . սրտին՝ պզտիկ կու գայ տիեզերաց սահմանն, միտքն՝ անսահմանութեան մէջ ճամբայ կու բանայ . հոգին՝ կու տիրէ երկնից . սէրն՝ կու հասնի Արարչին առջեւ, եւ կ'ըսէ . Ահաւասիկ եմ:

Փոքրիկ արարածն այն մարդ մեծ աշխարհք մ'ալ է ինքնին . վասն զի Աստուծոյ դաստակերտ է, Աստուծոյ պատկեր է, թէ եւ աղաւաղեալ . եւ ունի սկզբնատրպին զօրութիւնը:

Արարչագործ մատանց բարձրագոյն կերտուածքն՝ չեն Այրարատեան կատարքն կամ գագաթն Եմաունի, այլ ուսերուդ վերեւ կանգնած իմաստից տաճար՝ գլուխդ է . բա՛րձր եւ բարակ բանուած: Չկայ ծաղիկ արժանաւոր այդոր պսակ ըլլալու . ոչ ոսկին եւ արծաթ՝ որ հողէ կ'ելնեն, ոչ ծիրանի ծովերէ խալսած բուստ եւ մարգարիտք: Ո՛հ . գեղեցիկք են մայիսի առաւօտուն ցօղակաթ վարդակարմիր փնջիկքն այլ՝ դալար ճակտի մը բոլորած . սակայն շատ աւելի պայծառ է ամօթխածութեամբ խայծեալ երեսն . եւ աւելի ազնիւ՝ անոր վրայ շարուած աշխատութեան կայլակներն:

Կենաց կարեւոր եւ վայելուչ պիտոյքը լեցնելէն աւելորդ երկրաւոր շահք եւ վաստակք՝ անարգ եւ անիրաւ են այնպիսի գլխոյ մը, որ երկնից եւ հայրենեաց մաքուր իմաստներովը լցուած է:

Եթէ քաղաքական կեանք օրինաւոր են ի վերայ երկրի, անհրաժեշտ պարտք են եւ հայրենեաց շանքն:...

Լալով կու ծնանիմք, խաղով կու մեծնամք . աշխատութեամբ պէտք է մարդ ըլլանք . մէկ ձեռքով մեզի, մէկ ձեռքով մեզի նմանեաց օգնենք . սիրով կենակցինք, պատուով ապրինք, յուսով ծերանամք, գոհութեամբ մեռնինք, սրբութեամբ աւանդենք փշողին՝ մեր շունչը . թաղուինք օրհնութեամբ . մնամք ի հայրենիս՝ հայրենեաց չափ, եւ յերկինս՝ Աստուծոյ չափ: ...

Ահա ազգք եւ ազինք, մեզի մօտ եւ հեռի, Հայկակ, ամենքն գբաղած են իրենց հայրենի ագարակը շէնցընելու . եւ անդրանիկն ազգաց՝ մեր ազգն՝ կրնա՛յ ըլլալ յետամնաց:... Մարդ, սիրտ ունող մարդ՝ չի կրնար լսել գայս՝ առանց սոսկալու, թող թէ Հայ մարդ:

Առ եւ դու ուրեմն, ո՛վ Հայկակ, քու վիճակիդ յարմար աշխատութեան գործիդ, վերցուր յերկինք, օրհնել տուր . եւ աշխատէ: Աշխատէ յերկրի, միտքդ յերկինս, սիրտդ հայրենեացդ վրայ:

Առանց երկնից օրհնութեան՝ չի յաշողիր գործ հայրենեաց ի վերայ երկրի: Ջոր երկինք չօրհներ, ի գուր օրհնեն եւ հայրենիք . եւ գոր չեն օրհներ հայրենիք՝ նա չօրհնուիր եւ յերկնից:

Կու բուսնի եւ սերմն ատելութեան, կու ծածկէ դաշտեր . սպասէ, եւ կու տեսնես փուշ եւ տատասկ:

Միրոյ սերմիկն՝ թէ եւ կորդացեալ երկրի մ'աւանդուի, անխոնջ եւ ամուր արօրին տակ, քրտնաջան մշակին համբերութեամբ, վերջապէս կու ծլի, ծաղկի, պտղաբերէ եւ սնուցանէ:

Եւ մշակն մշակաց, որուն ագարակն է բոլոր աշխարհս, պատուիրեց մաճակալին, շիտակ գծել ու քշել, եւ ետեւ չնայիլ, երթալ յառաջ եւ ետեւ չնայիլ, երթալ յառաջ, եւ շիտակ երթալը: Ո՛հ, երթալ եւ լալով, եթէ հարկ է, երթալ եւ ցանել, կու հասնի որն ալ խնտալով հնձելու, որաներով շալկած, ծաղիկներով պսակուած դառնալու:

Ճշմարիտ հայրենասիրությունն չէ ասույ կամ փայլակ մը յանկարծ երեւցող եւ անցնող, որ հուր մոլի եւ թափառիլ, եւ ոչ կայծակն անկուշտ այրող լափող, այլ հանդարտ ջերմություն մը, յստակ լուսով անսագիտ խղճով...:

ու քշել, եւ ետեւ չնայիլ, երթալ յառաջ եւ ետեւ չնայիլ, երթալ յառաջ, եւ շիտակ երթալը: Ո՛հ, երթալ եւ լալով, եթէ հարկ է, երթալ եւ ցանել, կու հասնի որն ալ խնտալով հնձելու, որաներով շալկած, ծաղիկներով պսակուած դառնալու:

Ճշմարիտ հայրենասիրությունն չէ ասույ կամ փայլակ մը յանկարծ երեւցող եւ անցնող, որ հուր մոլի եւ թափառիլ, եւ ոչ կայծակն անկուշտ այրող լափող, այլ հանդարտ ջերմություն մը, յստակ լուսով անսագիտ խղճով...:

Ո՛վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասիրություն, դու պատրաստէ, վառէ սրբէ զսիրտ Հայկակայ: Քեզմով վառուած սիրտն՝ անխայթ եւ անմոխ լոյս կ'արձակուէ, եւ եթէ խարկի մրկի սիրտն, եւ անցնի երկնաւոր մասամբն, երկնունակ մասն՝ մնայ ի վերայ հայրենեաց, որպէս հոտ մըշկի եւ կնդրրկի:

Եւ շատ սեղաններ, շատ տապաններ, շատ քարեր ու հողեր կան ի Հայաստան, ուսկից դարե դար եւ անդադար կու ծխէ հոտն անուշութեան, հոտն հայրենեաց, գոր չեն կրնար ջնջել ոչ զէնք եւ ոչ քէնք:

Վասն զի մեր առաքինի եւ ճշմարիտ, ընկերասէր, ազգասէր որդեսէր եւ հայրասէր նախնիքն, այն երկրին վրայ իրենց պարկեշտ նշխարքը թողլով, անմահութեան շնչով վերէն անոր վրայ միշտ կու շնչեն եւ կու շրշրնջեն:

Շնչեցէ՛ք ո՛վ շունչք մտաբացք, սրտարծարծք, հոգեվառք . շնչեցէ՛ք հոգի՛ք Գրիգորեանց, Ներսիսեանց, Սահակեանց, Մովսիսեանց, Ղեւոնդեանց, Վարդանանց, Վահանանց, Սմբատաց, Աշոտոց, Լեւոնեանց եւ Հեթմեանց . սո՛ւրբ թագաւորք, հայրապետք, վարիչք եւ վարդապետք Հայոց, շնչեցէ՛ք յերկնից յերկիր: Խառնուի՛ ձեր երկնաւոր շունչն՝ յերկրաւոր շունչ Հայկակայ . որ երբ հասնի աւանդելու իր վերջին շունչն ալ՝ եթէ հանդարտ ու հեզիկ, եւ եթէ հրահատ ու հառաչածայն, հաւասարապէս խառնուի՛ ձերիններուն հետ:

Եւ երբ իր օրական եւ տարեկան շրջաններուն պէս՝ երկիրս իր բազմադարեան շրջանն ալ ասարտելով՝ դադրի եւ կոտորի, եւ նոր երկրի մը հրաւիրակ փողն հնչէ, այս հին լուծեալ երկրիս վերջին արձագանգաց միջէն՝ վերջնագոյն արձանգ մ'ալ ըլլա՛յ քուկդ, սուրբ սէ՛ր հայրենեաց: ...

Եւ, ո՛հ, թէ այն խորին եւ լռին արձագանգաց՝ նուագ վանգին մ'ըլլար այս իմ քեզի նուիրածս, Հայկակ, ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ: